

Հաճի նազօն չէր մտցած մեր տոպրակին մէջ դնելու, երեք հաստ մամ, մէկ տուփ լուցիկ ու մի քանի պտղունց խունկ:

Երկիւղածութեամբ՝ իր նկարագրած՝ սեղանածե քարին վրայ կը վառենք մոմերը: Քիչ մը կալկալա կը հաւաքենք, կրակ կը շինենք ու նոյն սեղանին վրայ կը ծըխենք խունկը:

Խունկին հոտը երկիւղածութիւնով մը կը լեցնէ հոգիս և ես ինքնաբերաբար կ'աղօթեմ:

«Ամենախնամ՝ Տէր, զի՛ր պահպան աչաց իմոց  
 Զերկիւղ քո սուրբ ո՛չ ևս հայիւ յայրատ,  
 Եւ ականջաց իմոց՝ ո՛չ ախորժեկ լսել զբանս չարութեան,  
 Եւ բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսիլ զստութիւն:  
 Եւ սրտի իմոյ՝ ո՛չ խորհիլ զչարութիւն:  
 Եւ ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն:  
 Եւ ոտից իմոց՝ ո՛չ զնալ ի ճանապարհս անօրէնութեան,  
 Այլ ուղղեա զշարժումն սոցա լինել միշտ ըստ  
 Պատուիրանաց քոց յամենայնի...»:

Երբ մեր մոմերը մաշած էին և խունկը հալած ուղեցի որ ժայռին գազաթը ելլենք, որ 100-150 մէթր մեր վրայ կը բարձրանար: Ընկերներս զարմացած իմ ամէն բան տեսնելու փափաքին վրայ՝ մերժեցին ընկերանալ: Ի՞նչ կար այդ լե՛րի գազաթին վրայ: Անոնք չէին ըմբռներ բարձունքին վերջին գազաթին հասնելու հաճոյքը, երբ անձը կը զգայ թէ ա՛լ վեր՝ ուրիշ բարձունք մը չկայ:

Քիւրտ երիտասարդները չուղեցին ինձ մինակ ձգել, Անոնց հետ մենք բարձրացանք ու քառորդ ժամէ մը գազաթն էինք արդէն:

Ի՞նչ լաւ բան է կանգնիլ բարձունքի մը ամենաբարձր կէտին վրայ ու զգալ թէ հասած ես բարձրագոյն կէտին: Այս հաճոյքը չգիտեն բոլոր անոնք որոնք լեռ բարձրանալու հաճոյքը չունին:

Կեանքիս լաւագոյն յիշողութիւններէն մէկը կապուած է այդ բարձունքին հետ: Բնութեան գեղեցկութիւնը, վեհութիւնն ու սէրը:

Տեսած էք տեսարան մը որ ունի ծո՛վ, շարժո՛ւն լողացող ծո՛վ, վրան ճերմակ առաքաստանաւեր, շրջանակուած ձիւնածածկ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

## ԱՐԳԵԼԱՆԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԿԱՍ ՏԷՐ ՅՈՒՍԿԱՆ ՈՐԴԻՈՅ ՎԱՆՔ

ՏԵՂԱԳՐՈՒԿԱՆ. — Այս վանքը կը գտնուէր Վասպուրականի մէջ, Բերկի քաղաքին ժօտ, Պանտիմահու գետին միւս կողմը, բլուրի մը վրայ: Նախապէս կը կոչուէր Արգելանայ Ս. Աստուածածնի մեծնատան: Յետոյ, երբ հոս թաղուեցաւ Տէր Յուսիկ քահանայի որդի Արտամէտցի հըրաւ շագործ Ստեփանոս վարդապետը, անոր անունով մենաստանն ալ սկսաւ կոչուիլ Տէր Յուսկան Որդւոյ վանք (Հ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք, Վենետիկ, 1864,

լեռներով, լեռնաշխարհ մը՝ լեռներու անվերջանալի շղթաներով, որոնք ուս ուտի կամ կոնակ կոնակի տուած ամբակու բանակի մը պէս կը կանգնին երկրի վրայ տիրանական զօրութիւնով, գիւղեր և պուրակներ, տեղ տեղ, իրենց կանանչով, որոնք հրկրին կուտան մուգ կանաչ գոյն մը, ջրառատ գետակներ՝ որոնք արեւուն ճառագայթներուն տակ կը պսպղան ու ճերմակ փրփուրներով լեռներու խորանդունդներուն մէջ կը սողոսկին, կրկին երևնալու ու կըրկին անյայտանալու:

Այն ինչ որ կարելի չէր տեսնել ժայռին տակէն տեսայ ժայռին գազաթէն: Ամբողջ Հայկաստանը, Վարազ լեռան արեւելքը պսպղացող լիճերը, Երիցալիճը, Դարմազիւղի, Էրմոնեց, և արօտաձայր լեռնադաշտերը որոնք կը վերջանային պարսկական սահմանին վրայ, Աղբալի շրջակայքը իրենց լեռներով՝ մինչև Ս. Բարթողիմէոսի վանքը, Պաշգալէի և Իրիզի սահմանները՝ Դէպի հարաւ — արեւելք Շատախի լեռները, որոնց վերեւ կը բարձրանար յաղթահասակ Գլօլալականը, Առնօսը, Լեռնապարի տրքաները՝ 3550 մէթր բարձրութեամբ:

Գ.Ա.Ի.ԱՇՈՐԴԻ  
 (Շարունակելի՛ 4) (Ն. ՅՈՎՉԱՆՆԷՍՅԱՆ)

էջ 266, Նոտարք, էջ 54-55, Գ. Շէրենց, Սրբազայրեր, Թիֆլիս, 1902, էջ 81-83): Անէր քանի մը եկեղեցիներ, Ս. Աստուածածին, Ս. Կարապետ, Ս. Յարութիւն, ևայլն:

ՊԱՏՄԱԿԱՆ. — Արգելանայ կամ Տէր Յուսկան Որդւոյ վանքին առաջնորդներէն կը յիշուին հետեւեալները.

1. — Տէր Սարգիս, 1294. — Յ. Ձեռ. Վասպ. էջ 116:

2. — Մելիխեք Վանահայր, 1414-20. — Թօփճեան, Յ. Ձեռ. Մաշիկ վարդապետի, էջ 62: Նոտարք, էջ 61:

3. — Մկրտիչ Վարդապետ Օրբելինց, Բերկրցի, որդի Օրբէլի, 1418-39. — Նոտարք, էջ 55, 118-9: Ա. Դաւր. էջ 416: Յովսէփեան, Թովմայ Մեծ. կեանքը. էջ Թ. ծնթ. 3: Լոյս, 1905, էջ 519:

4. — Ներսէս Վարդապետ, 1448-9. — Կոնիքի, Յ. Ձեռ. Բրիտ. Թանգարանի, էջ 95. տպուած է «յարպելան», որ ընթեռնչի է կը կարծենք «յարգելան»: Ներսէս վարդապետը յիշուած է նաև Գրիչ Յակոբ վարդապետի կողմէ, որմէ կը տեղեկանանք թէ Տէր Յուսկան Որդւոյ եկեղեցին շինած է ան. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1622:

5. — Մկրտիչ Վարդապետ, որդի Աթաբէկի, 1473-98. — Sir. Der Nersessian, An Arm. Gospel of the XV. Century. 1950, p. 3-4:

6. — Մինաս Արեւիսկոպոս, 1562. — Յ. Ձեռ. Վասպ. էջ 230:

7. — Աբրահամ Արեւիսկոպոս, + 1634. — Սիոն, 1933 էջ 266: Սիւրմէեան, Յ. Ձեռ. Երուսաղէմի, էջ 94, ուր կը յիշուին Արգելան վանքի միաբաններէն Տէր Կիրակոս, Տէր Զաքարէ, Տէր Գալուստ, Տէր Յովհաննէս, ևայլն:

8. — Սարգիս Վրդ. Կոփեցի, 1700 թուին Նորոգած է Տէր Յուսկան Որդւոյ եկեղեցին. — Դիւան, Ժ. էջ 119:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Մեզի հասած յիշատակարաններ կը ցուցնեն թէ այս վանքին մէջ ալ բաւական Գրիչներ աշխատած են, առաւելապէս ԺԳ. — ԺԶ. դարերուն: Ահաւասիկ շարք մը անոնցմէ:

Ա. — Յակոբ Կրօնաւոր, Գրիչ, 1251-94. — օրինակած է,

1. — Աւետարան, 1251/ին, Գէորգ քա-

նանայի խնդրանքով. — Յ. Ձեռ. Վասպ. էջ 87:

2. — Աւետարան, 1294/ին, բարեպաշտ Խելօքի խնդրանքով. — Յ. Ձեռ. Վասպ. էջ 115:

Բ. — Յովհաննէս Գրիչ, 1331/ին օրինակած է Ձեռնագրութեան Գիրք մը, նորակնքեալ Վարդան եպիսկոպոսի համար. — Կոնիքի, Յուսկան, Թ. 30: Լ. Ս. Մաշիկեան, ԺԳ. դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Երեւան, 1950, Թ. 293:

Գ. — Մկրտիչ Կրօնաւոր, Գրիչ, որդի Մուրատի, 1414/ին օրինակած է մէկ Լուծմունց Դժուարիմաց Բանից Սաղմոսի, Գր. Տաթևացիի, իր ուսուցչին Մկրտիչ վարդապետի խնդրանքով. — Թօփճեան, Յ. Ձեռ. Մաշիկ վարդապետի, Թ. 54:

Հաւանաբար ինքն է օրինակած, 1420/ին, Ս. Յակոբեանց Թ. 1574 ժողովածոն, որուն մէջ կայ սա փոքր յիշատակագրութիւնը. — «Այլ և յիշել աղաչեմ, զիս զեղեկի, զժող, զքնափ, և զմեղսսէք զժողս, զՄկրտիչ սոսկանուն վարդապետ, որ ի վաղուց հետէ փափագէի սուրբ գաւանութեանս որ զձագրեցի զսա ի քարանձաւանապատս որ կոչի Արգելան, ի թվականիս ՊԿԹ. շրջագայութեան տոմարին: — էջ 212:

Դ. — Ղազար Կրօնաւոր, Կազմող, 1414/ին կազմած է Մկրտիչ Կրօնաւորի օրինակած Լուծմունքը. — Թօփ. Թ. 54:

Ե. — Յակոբ Աբեղայ, Գրիչ, որդի Յուսկան, 1418-25, օրինակած է,

1. — Աւետարան, 1418/ին, Մկրտիչ քա-

նանայի խնդրանքով. — Նոտարք, էջ 54-5:

2. — Աւետարան, 1425-ին, Մարտիրոս Աբեղայի և իր եղբոր Միխիթարի խնդրանքով. ապա նուիրուած Տիրամօր Աստուածածնին ի վանս Առաքաստայ. — Լոյս, 1905, էջ 518-9:

Զ. — Մկրտիչ Կրօնաւոր, Գրիչ, որդի Օրպէլի, 1420-ին օրինակած է Աւետարան մը, տանուտէր Նասրատիին համար. — Նոտարք, էջ 60-61:

Է. — Կարապետ Քահանայ, Գրիչ և Մաղկող, 1420-32, օրինակած և ծաղկած է.

1. — Աւետարան, 1420-ին, Ռէս Մարտիրոսի և իրեններուն խնդրանքով. — Յ. Ձեռ. Վասպ. էջ 465:

2. — Մաեսոց, 1432-ին, Կարապետ Քահանայ օրինակած է, Մինաս դպիր ծաղ-

կած, և Հայրապետ Կրօնաւոր կազմած: Ստացողն է Մկրտիչ Վրդ., որդի Օրպէլի. — Նօտարք, էջ 100-101:

Ը. — Գրիգոր Վարդապետ, Գրիչ, 1439-75, որդի Աթաբէկի, և աշակերտ Օրբէլեանց Մկրտիչ Վարդապետի, օրինակած է:

1. — Աւետարան, 1439-ին. — Առաք. Դաւր. էջ 416, An Arm. Gospel, p. 4:

2. — Աւետարան, 1475-ին, իր եղբոր Մկրտիչ Վարդապետին համար. ծաղկումսն օգնած է Իսահակ Արքեպիսկոպոս. — An Arm. Gospel, p. 3-4:

Թ. — Յակոբ Վարդապետ, Գրիչ, որդի Մկրտիչի և Խնդրիկի, 1449-55, ուսուցիչ Կիրակոս Արեղայի, որուն մասին սատուներն ալ կը կարգացունին. «Վա՛յ ինձ, Մովսէս իրաւի խորտակեաց զտախտակն քարեղէն և ես անիրաւ խորտակեցի այսօր զտախտակն փայտեղէն ի վերայ աշակերտին իմոյ Կիրակոս նորընծայ Արեղայի: Վա՛յ սոսկանուն Յակոբ Վարդապետիս, զի մորմօքեցուցի զարգարն» (Թղ. 78):

Օրինակած է վեց տարիներու ընթացքին, 1449-55, զանազան վայրերու մէջ, սկսելով Արգելանայ վանքէն, մէկ Մեկն. Արարածոց, Ծերենց Գրիգոր Վարդապետի, և զանազան քարոզներ, և ըն. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1622:

Ժ. — Ղազարոս Կրօնաւոր, Գրիչ, 1464-ին, Մեծոփայ վանքի վանահայր Վարդանի խնդրանքով, մագաղաթի վրայ օրինակած է, ընտիր բուրբազով. Շարակնոց մը, որ կը պարունակէ շարք մը պարականոն շարականներ. — Մ. Արք. Սմբատեանց, Գեղարքունի, էջ 408-9:

ԺԱ. — Յովսէփ Աղթամարցի, մագաղաթ շինող, Գրիչ և Եկարիչ, որդի Տէր Աւագի. 1497-ին օրինակած է և չափաւոր զեղեցկութեամբ նկարազարդած Շարական մը. — Արարատ, 1919, էջ 5, ծանօթ.:

ԺԲ. — Եղիա Կրօնաւոր Արգելանցի, Գրիչ և Կազմող, 1541-62. — օրինակած է:

1. — Աւետարան, 1541-ին, տանուտէր Խաւջայ Խալիֆի խնդրանքով. — Թ. Աղբար, Բ., էջ 465:

2. — Աւետարան, վերստին կազմած է 1562-ին. գրուած է Աղթամար 1393-ին, ձեռամբ Ջաքարիա Գրչի. — Յ. Ձեռ. Վասպ., էջ 230:

ԵՐՈՒՍԱՂԷՍԻ

Ս. ՅԱԿՈԲԵԱՆՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՅԱԽՃԱՊԱԿԻԷ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Գրեց՝ G. ANTONIUS

Ս. Յակոբեանց հայոց եկեղեցին հպարտ կը զգայ ինքզինքը, շատ հետաքրքրական շարք մը. — տարբարազարար անամբողջ-յախճապակիէ նկարներ ունենալուն համար: Այս նկարները մեծաւ մասամբ կը գտնուին եկեղեցիին հարաւային մասին՝ Ս. էջմիածնի մատրան մէջ, երկու ուղիղ շարքով, զէմ յանդիման իրարու որոնցմէ մին՝ հիւսիսային և միւսը հարաւային սրմբը կը զարդարեն: Քանի մը ուրիշներ ալ վանքի հեռաւոր մէկ մասին մէջ կը գտնուին, վարդապետի մը խուցին պատին վրայ: 300 կտոր յախճապակիներէն որոնք ժև. դարու առաջին քառորդին ջերմեռանդ հայերու կողմէ բերուած են երուօղէմ, հիմա 37 կտոր միայն կը մնան: Ս. Յարութեան եկեղեցին զարդարելու համար ուխտի նըւէրներ են ստանք, ապսպրուած Գէօթահիայէն ինչպէս որ արձանագրութիւնները ցոյց կուտան. բայց զանազան պատճառներով իրենց նպատակին չեն ծառայած ու փճանալով կամ ցրուելով 37 կտոր միայն մնացած են:

Բոլորն ալ նոյն մեծութեամբ են, 7 X 7 Ինչ, բայց շատերուն ծայրամասերը կըտրատուած կամ մաշած են, երբեմն ալ պատին վրայ զետեղուելու ատեն ճեղքուած են: Պատկերները ներկայացուած են պայծառ գոյներով, կանաչ, դեղին, կապոյտ, և երբեմն ալ կարմիր. յետագետնի մը վրայ որ միշտ ճերմակ է: Անոնք Հին և Նոր Կտակարաններէն տեսարաններ և երբեմն ալ սուրբերու նկարներ կը ներկայացնեն:

Արտագրուած են Գէօթահիայի մէջ ժև. դարու սկիզբը, որ է ըսել ժամանակաշրջան մը երբ միջնադարու անատուեան և սիւրիական արուեստագիտական աւանդութիւնները չիջած են և կաւէ ամաններու գունաւորման գործը յետադիմութեան (decadency) մէջ է: Այսպէսով հասկնալի կ'ըլլայ այս պատկերներուն քիչ մը նախնական ներկայացումն ու քիչ մըն ալ խակ

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ